

**1782.** — Ս. Ստեփանոսի պատկերին յիշատակարանը .

“Յիշատակ է Սուրբ Լուսավորչի Եկեղեցւոյ Հաւասար դպրաց. ՌՄԼԱ (= 1782) սեպտմ. ԺԹ. (= 19) ինն”:

**1794.** — Ս. Յակոբ Մժբնայ Հայրապետի մատրան սեղանին վերեւ զետեղուած .

“Յիշատակ է Սուրբ Յակոբայ սեղանս Աղքատաց Գանձապետք Ստեփանն. Տօնիկն. Սերօրէն. Չօհրան. Գարբիէլն. Սարգիսըն. Սերօրէն. Սարգիսն եւ բարեպաշտօն անձինք. ԹՎին ՌՄԽԳ. (= 1794) ինն”:

**1799.** — Բողորովին Հնցած մանուշակ-թաւչէ շուրջառի մը յիշատակարանը որ երկու քղանցքներուն ծայրը բանուած է ոսկեթելով: Շուրջառիս դեղին աստառը եւ ծիրանի եզերքը շատ ազնիւ կերպաս է:

“Յիշատակ է շուրջառս բոլոր ժամսո(ի) զգեստին Բենկացի Չայենց մահտեսի Վարդերես Ամիրայի որդւոյ Հանգուցեալ Յակոբ աղային ի դուռն Ղալաթիոյ սուրբ Լուսավորչայ Եկեղեցւոյն ՌՄԻԸ”:

**1799.** — Ս. Խաչի բեմին յիշատակարանը :

“Յիշատակ է սուրբ սեղանս եւ բեմն արդեամբք եւ ծախիք արեւելցի / պապայի որդի մահտեսի Կարապետին / եւ Թոռանցն Յօհաննէսին / եւ Կարապետին եւ որդեգիր Անտօնին եւ Մկրտչին եւ կողակցոյն / Իսկուհոյս եւ դստերն Թազոնոյն եւ Հանգուցեալ մահտեսի / Նոյսաբեթին եւ մահտեսի Հայրապետին եւ ծնաւդացն եւ / Համայն կենդանեաց եւ ննջեցելոցն ԹՎին 1799 / նաեւ Արեքին, Էլմասին եւ Նփրեմին”:

Ժամօթ. — Միեւնոյն յիշատակարանին Համառօտագոյնը գրուած է Ս. Կարապետի բեմին ճակատը:

**1799.** — Ս. Խաչին դուրսը, Հիւսիսային կողմ, նեղ անցքին ճակատը, մարմար գուռնային (Չուրի բնագունարան) արձանագրութիւնը .

“Բենկացի Խոնճակիւնց Հանգուցեալ մահտեսի Աստուածատուրի որդի պարոն Գասպարն եւ ի յիշատակ Համօրէն ննջեցելոցն. յամին Տեառն. 1799”: